

Արձանագրություն թիվ 3

ԵՊՀ-ի ղեղազիտության և քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2015թ դեկտեմբերի 3-ին

օրակարգը՝

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ամբիոնները ներկայացրել են ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաները: Խնդրում եմ հատուկ ուշադրություն դարձնել այս հարցին և ինտենսիվացնել աշխատանքը ուսանողների հետ: Ձեզ ներկայացված է աշխատանքների ցուցակը, եթե չկան առարկություններ և այլ առաջարկություններ, ես առաջարկում եմ հաստատել:

Հարցի վերաբերյալ նոր առաջարկություններ չեղան:

Խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց ավարտական և դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաները:

2. Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան.

- Մեր մյուս հարցը անբիոնների վարիչների հաղորդումներն է կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Լսենք անբիոնների վարիչներին:

Դուրգարյան Ն.Ա.՝ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար.

- Ամբիոնում կուրսային աշխատանքները կատարվում են նորմալ հունով, շատերի մոտ այն արդեն ավարտման փուլում է:

Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան.

-Պրն. Սադյանը դասախոսության ժամանակ կհաձնարարի, որ բոլոր դեղագործները ներկայանան ամբիոններ:

Հարությունյան Ռ.Ս.` անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ.

- Մեր մոտ համանման վիճակ է, բոլոր բաժիններում աշխատանքները բաշխված են: Ամբիոնում կուրսային աշխատանքները կատարվում են նորմալ հունով:

Սադյան Ա.Ս.` դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ.

- Ամբիոնում կապված կուրսային աշխատանքների հետ խնդիրներ չկան:

Լսեցին –Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտ, քիմ. գիտ. դոկտոր Կարինե Ռաֆայելի Գրիգորյանին պրոֆեսորի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:

Արտահայտվեցին – Խորհրդի նախագահ, պրոֆ. Ս. Վ. Ղուչիկյանը և մրցութային հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ի. Լ. Ալեքսանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ պրոֆեսորի կոչման հավակնորդ Կ. Ռ. Գրիգորյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Կ. Ռ. Գրիգորյանը դասախոսություններ է կարդում “Ֆիզիկական քիմիա”, “Ֆիզիկական քիմիայի ընտրովի գլուխներ”, “Ֆլուորեսցենց մեթոդը կենսաբանական համակարգերում”, “Շրջակա միջավայրի ֆիզիկական քիմիա” առարկաներից: Ղեկավարում է կուրսային, ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: Կ. Ռ. Գրիգորյանի ղեկավարությամբ թեկնածուական թեզ պաշտպանել է 1 գիտության թեկնածու:

Կ. Ռ. Գրիգորյանը աշխատանքային գործունեության ընթացքում մասնակցել է 3 միջազգային դրամաշնորհների աշխատանքների: 1988թ-ին “ԵՊՀ-ի լավագույն գիտական աշխատանքներ” մրցույթում արժանացել է 2-րդ մրցանակի, 2010թ-ին` ԵՊՀ պատվոգրի, իսկ 2014թ-ին` շնորհակալագրի:

Կ.Ռ.Գրիգորյանը հեղինակ է 62 գիտական աշխատանքների, որոնցից 1-ը թարգմանված դասագիրք, 5-ը ուսումնամեթոդական աշխատանք, 3-ը հեղինակային իրավունք, 40-ը գիտական հոդված և 13-ը թեզիսներ են: Վերջին հինգ տարում հրատարակել է 13 գիտական հոդված, 1 ուսումնամեթոդական աշխատանք, տեղական

և միջազգային գիտաժողովներում նրա կողմից ներկայացվել է 8 թեզիս, բոլորն էլ դոկտորական ատենախոսությունը պաշտպանելուց հետո:

Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ **նախագահ՝** Գ. Պ. Փիրումյան, **անդամներ՝** Ռ. Պ. Մխիթարյան, Ա. Քեշիշյան:

Ընտրություններից հետո ֆակուլտետի խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 32 անդամներից 29-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 29 անդամներ: Կ. Ռ. Գրիգորյանին պրոֆեսորի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 29 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Կ. Ռ. Գրիգորյանին երաշխավորեց (Բ.00.04- Ֆիզիկական քիմիա մասնագիտությամբ) պրոֆեսորի կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

Լսեցին – Դեղագործական քիմիայի ամբիոնի ասիստենտ, քիմ. գիտ. թեկնածու Ժ.Վ. Սարգսյանին դոցենտի կոչում կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:

Արտահայտվեցին – Խորհրդի նախագահ, պրոֆ. Տ. Վ. Ղոչիկյանը և մրցութային հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ի. Լ. Ալեքսանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ դոցենտի կոչման հավակնորդ Ժ.Վ. Սարգսյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ժ.Վ.Սարգսյանը ԵՊՀ դեղագիտության ամբիոնում դասախոսություններ է կարդում “Դեղագիտական քիմիա-3”, “Դեղագիտական անալիզ” առարկաներից, դասավանդում է նաև նշված առարկաների լաբորատոր պարապմունքները: Ղեկավարում է կուրսային, ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: Դասախոսական աշխատանքի հետ միաժամանակ զբաղվում է նաև հիմնական և ավագ դպրոցում քիմիայի դասավանդման հիմնահարցերով: Ժ.Վ.Սարգսյանը հեղինակ է 62 գիտական աշխատանքի, որոնցից 11-ը ուսումնամեթոդական աշխատանք և գրքեր են, 38-ը գիտական հոդված, 2-ը հեղինակային իրավունք և 11-ը թեզիս: Վերջին երեք տարում հրատարակել է 15 գիտական հոդված, 4

ուսումնամեթոդական աշխատանք, ինչպես նաև գիտաժողովներում նրա կողմից ներկայացվել է 3 թեզիս:

Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ **ՆԱԽԱԳԱԽ՝** Գ.Պ. Փիրումյան, **անդամներ՝** Ռ.Պ. Մխիթարյան, Ա.Քեշիշյան:

Ընտրություններից հետո ֆակուլտետի գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 32 անդամներից 29-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 29 անդամներ:

Ժ.Վ.Սարգսյանին դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 29 անդամ, դեմ՝ 0, անվավեր՝ 0 քվեաթերթ: Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Ժ.Վ.Սարգսյանին երաշխավորեց դոցենտի (Բ.00.02-Վերլուծական քիմիա մասնագիտությամբ) կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

Լսեցին – Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի «Դեղերի տեխնոլոգիայի և էկոնոմիկայի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա. Մ. Հովհաննիսյանի «Հեղուկ դեղաձևեր (պատրաստման դեղատնային տեխնոլոգիա)» ուսումնական ձեռնարկի քննարկումը:

Որոշեցին – Վերոհիշյալ ձեռնարկը գրախոսելու նպատակով ուղարկել ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ Էդուարդ Էքմեջյանին:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ Լ.Խ.Գալստյանի և համահեղինակների „Օրգանական քիմիայի պրակտիկում” ուսումնական ձեռնարկի քննարկումը:

Որոշեցին – Վերոհիշյալ ձեռնարկը գրախոսելու նպատակով ուղարկել Խ.Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարան և Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարան:

Լսեցին– Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոգիայի»

ամբիոնի ստեղծման հարցի քննարկում:

Արտահայտվեցին – Նիստի նախագահ, քիմ. գիտ. դոկտոր , պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանը, դեղագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ա.Ս.Սաղյան տեղեկացրեցին, որ «դեղագիտություն» մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման, ինչպես նաև «դեղագործական քիմիա» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման ուսումնամեթոդական (մոտ 13 000 ժամ ծանրաբեռնվածություն), գիտաուսումնական և վարչակազմակերպչական բոլոր գործառույթների իրականացումը ստանձնում էր ԵՊՀ «Դեղագիտության» ամբիոնը, ինչը անշուշտ, իրատեսական չէ մեկ ամբիոնի համար և այսօր արդիական ու հրատապ խնդիր է ԵՊՀ «դեղագիտության» ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածության և դրա իրականացման մեջ ներառված պրոֆեսորադասախոսական անձնակազմի հենքի վրա նոր մասնագիտական ամբիոնների ստեղծումը:

ԵՊՀ ռեկտորի հրամանով ս/թ-ի սեպտեմբերի 24-ին դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում «դեղագիտության» ամբիոնի հենքի վրա արդեն բացվել է «դեղերի տեխնոլոգիայի և էկոնոմիկայի» ամբիոն, որի կազմի մեջ ներգրավվել են դեղերի տեխնոլոգիայի (դեղատնային և գործարանային) և ֆարմացիայի էկոնոմիկայի կառավարման հետ անմիջական կամ հարակից առնչվող առարկաները:

Հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները և այն հանգամանքը, որ «դեղագիտության» մասնագիտության 2015/2016 թվականի ուսումնական ծանրաբեռնվածության մեջ լիովին ներգրավված են ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ուղղությամբ բարձրորակ կադրեր պատրաստելու համար բոլոր անհրաժեշտ առարկայական ծրագրերը և դրանց իրականացման համար համապատասխան դասախոսական անձնակազմը, ինչպես նաև՝ անհրաժեշտ լաբորատոր սենյակներն ու սարքավորումները, ներկայումս իրատեսական է «Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի» ամբիոնի ստեղծումը:

Ելույթ ունեցան- Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ՝ Ռ.Ս. Հարությունյանը, անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր Հ.Գ.Խաչատրյանը, դոցենտ Ռ.Պ.

Մխիթարյանը, ովքեր հավանություն տվեցին ԵՊՀ դեղագիտության ամբիոնի հենքի վրա «Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի» ամբիոնի ստեղծմանը:

Որոշեցին- Հավանություն տալ ԵՊՀ դեղագիտության ամբիոնի հենքի վրա «Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի» ամբիոնի ստեղծմանը և սույն որոշումը ներկայացնել ԵՊՀ գիտական խորհուրդ: Որոշումն ընդունվեց միաձայն:

Լսեցին – Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գոհար Աշոտի Շահինյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կատարած աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է էլեկտրոնային կլանման սպեկտրոսկոպիայի և ֆլուորեսցենց սպեկտրոսկոպիայի մեթոդներով ջուր, ջուր-դիմեթիլսուլֆօքսիդ և AOT/ն-հեպտան/ջուր+ դիմեթիլսուլֆօքսիդ շրջված միցելային համակարգերում ակրիդին օրանժի ֆոտոֆիզիկական հատկությունները:

Կատարված աշխատանքների հիման վրա տպագրվել է 3 գիտական հոդված և մասնակցություն 2 միջազգային գիտաժողովներին:

Հանձնել է ընդհանուր պատրաստվածության կրթամասից ստուգարքներ հետևյալ դասընթացներից՝ «Մտավոր սեփականության իրավունք և պատենտագրություն», «Հոգեբանություն» և մասնագիտական պատրաստվածության կրթամասից ստուգարքներ «Ատոմային աբսորբցիոն անալիզ » և «Շրջակա միջավայրի աղտոտումը ՄԱՆ-երով» դասընթացներից:

Որոշեցին – Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել հեռակա ասպիրանտ Գ.Ա.Շահինյանին:

Լսեցին – Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի հայցորդ Զատա Լեռնիկի Գրիգորյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով հայցորդի կատարած

աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է դիմեթիլսուլֆօքսիդ-բենեոային խումբ պարունակող ցածրամոլեկուլային միացություններ (ացետոնիտրիլ, երկար ածխաջրածնային շղթայով ալկանոլներ) համակարգերի ծավալային, տրանսպորտային, մակերևութային և հեղուկ-գոլորշի ֆազային հավասարակշռությունները:

Կատարված աշխատանքների հիման վրա տպագրվել է 1 գիտական հոդված և մասնակցություն 2 միջազգային գիտաժողովներին:

Հանձնել է ընդհանուր պատրաստվածության կրթամասից ստուգարքներ «Մասնագիտական օտար լեզու (անգլերեն լեզու)», «Ինֆորմատիկա» և «Մանկավարժություն և հոգեբանություն», «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ», «Մտավոր սեփականության իրավունք և պատենտագիտություն» և մասնագիտական պատրաստվածության կրթամասից «Լուծույթների թերմոդինամիկա» և «Կենսաքիմիական ռեակցիաների կինետիկա» դասընթացներից:

Որոշեցին – Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել հայցորդ Ջ.Լ. Գրիգորյանին:

Լսեցին – Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի «Դեղագիտություն» բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Վարդանյանին երաշխավորելու հարցը՝ «Հանրապետության լավագույն ուսանող» մրցույթին մասնակցելու համար:

Ելույթ ունեցան – Դեղագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Ս.Սադյանը, ֆակուլտետի դեկան Տ.Վ.Ղոչիկյանը և գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ Ա.Ի.Մարտիրյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ «Դեղագիտություն» բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Վարդանյանը բոլոր չափանիշներով համապատասխանում է մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներին: Ուսումնառման ամբողջ ընթացքում Գ.Վարդանյանը ցուցաբերել է գերազանց առաջադիմություն,

ակտիվորեն մասնակցել է ուսանողական միջոցառումներին և ՈՒԳԸ աշխատանքներին:

Որոշեցին – Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը միաձայն որոշեց «Դեղագիտություն» բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Գ.Վարդանյանին երաշխավորել «Հանրապետության լավագույն ուսանող» մրցույթին մասնակցելու համար:

ֆակուլտետի գիտական

խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա.Ի.Մարտիրյան